ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29.01.2024թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Ն. Հարությունյանս, քննության առնելով առնելով «Ագրոթեքինվեստ» ՍՊԸ (այսուհետ նաև՝ Հայցվոր) հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Հայցվորի ներկայացուցիչ Կարո Գրիգորի Ասատրյանը 12.01.2024 թվականին հայցադիմում է մուտքագրել Դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ պատասխանողին Երևանի քաղաքապետարանի հայտարարված հրատապ բաց մրցույթի ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-24/1 ծածկագրով ընթացակարգի 04.01.2024թ. կայացված պայմանագիր կնքելու որոշման մասին համառոտ տեղեկատվության 34-րդ և 35-րդ չափաբաժիններում՝ «Մասնակցի առաջարկած գին» աղյուսակում ուղղում կատարելուն և ուղղված պայմանագրային գնով պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու, իսկ անհնարինության դեպքում մասնակի՝ «ԱԳՐՈԹԵՔԻՆՎԵՍՏ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից և հաղթող ճանաչելու մասով, 26.12.2023թ. նիստի N 3 և 29.12.2023թ. նիստի N 4 արձանագրություններն անվավեր ճանաչելու՝ գնառաջարկի անհամապատասխանության հիմքով ճանաչելով հայտը մերժված և հայցվորին հայցի ապահովման վճարումից ազատված, պահանջների մասին: Հայցադիմումը դատավորի աշխատակազմին է հանձնվել 17.01.2024թ.:

Դատարանի 22.01.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է: Որոշումը, հայցադիմումը և կից փաստաթղթերը հայցվորի ներկայացուցիչը ստացել է 23.01.2024թ.:

Հայցադիմումը կրկին ներկայացվել է 23.01.2024 թվականին՝ հայցադիմումի վերադարձման համար հիմք հանդիսացած թերությունները շտկված: Կրկին ներկայացված հայցադիմումը դատավորի աշխատակազմին է հանձնվել 24.01.2024 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ

սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Քննության առնելով հայցադիմումը, ուսումնասիրելով կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ ներկայացված հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

Միաժամանակ Հայցվորի ներկայացուցիչը միջնորդություն է ներկայացրել գործը դատական նիստում քննելու մասին:

Միջնորդությամբ հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածին, հայտնել է, որ գործն անհրաժեշտ է քննել դատական նիստում՝ հնարավորություն տալով Հայցվորին լիարժեք ներկայացնելու իր դիրքորոշումը և ապահովել վերջինիս լսված լինելու իրավունքը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը:

Գործը դատական նիստում քննելու մասին դատարանը կայացնում է որոշում հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

Սույն դեպքում Հայցվորի ներկայացուցիչը գործը դատական նիստում քննելու մասին միջնորդությամբ ընդամենը փաստարկել է, որ դատական նիստ պետք է հրավիրել՝ հնարավորություն տալով Հայցվորին լիարժեք ներկայացնելու իր դիրքորոշումը և ապահովել վերջինիս լսված լինելու իրավունքը: Դատարանն արձանագրում է, որ միջնորդությունը չի պարունակում հիմնավորում՝ գործը դատական նիստում քննելու անհրաժեշտության վերաբերյալ: Ինչ վերաբերում է իր դիրքորոշումը լիարժեք ներկայացնելու հնարավորությանը և լսված լինելու իրավունքին, ապա ինչպես արդեն նշվեց, ընդհանուր կանոնի համաձայն՝ գնումների վերաբերյալ վեճերով գործերը Դատարանը քննում և դրանց վերաբերյալ վճիռները, որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, իսկ Հայցվորը զրկված չէր հայցադիմումով իր դիրքորոշումը լիարժեք ներկայացնելու իրավունքից:

Նման պարագայում ներկայացված միջնորդությամբ Դատարանը չի կարող գալ եզրահանգման, որ գործն անհրաժեշտ է քննել դատական նիստում, ուստի միջնորդությունն ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ, 200-րդ, 234.5-րդ, 234.6-րդ, 234.9-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Ագրոթեքինվեստ» ՍՊԸ հայցադիմումն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի հայտարարված հրատապ բաց մրցույթի ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-24/1 ծածկագրով ընթացակարգի 04.01.2024թ. կայացված պայմանագիր կնքելու որոշման

մասին համառոտ տեղեկատվության 34-րդ և 35-րդ չափաբաժիններում՝ «Մասնակցի առաջարկած գին» աղյուսակում ուղղում կատարելուն և ուղղված պայմանագրային գնով պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու, իսկ անհնարինության դեպքում մասնակի՝ «ԱԳՐՈԹԵՔԻՆՎԵՍՏ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից և հաղթող ճանաչելու մասով, 26.12.2023թ. նիստի N 3 և 29.12.2023թ. նիստի N 4 արձանագրություններն անվավեր ճանաչելու՝ գնառաջարկի անհամապատասխանության հիմքով ճանաչելով հայտը մերժված պահանջների մասին, ընդունել վարույթ և համարել Դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 12.01.2024թ.:

2. Քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024 թվականի մարտի 11-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:

3. «Ագրոթեքինվեստ» ՍՊԸ միջնորդությունը՝ գործը դատական նիստում քննելու մասին, մերժել:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**